

УПРАВЛЕНИЕ БАНКОВСКИМИ РИСКАМИ КАК ЗАЛОГ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

*М. Н. Ергян
А. М. Манукян*

В условиях рыночной экономики в процессе управления банковской деятельностью важной задачей является совершенствование методов управления рисками. Для эффективного управления банковскими рисками существенное значение имеет выявление причин возникновения рисков, так как они могут быть обусловлены как изменениями внешней среды, так и внутренними факторами.

С целью повышения эффективности банковской деятельности нужно руководствоваться такими принципами управления банковскими рисками, которые позволят прогнозировать, оценить и управлять ими, уменьшив их влияние на деятельность банков.

CONTROLLING BANKING RISKS AS GUARANTEE FOR EFFECTIVENESS OF BANKING ACTIVITIES

*M. N. Hergnyan
A. M. Manukyan*

Within the conditions of market economics and the controlling process of banking activities, the improvement of methods for controlling banking risks is considered to be an important task. In order to effectively control banking risks, one should find out the reasons arising these risks as they may be conditioned by external environment and internal factors, as well.

With the aim of improving the efficiency of banking activities, one should work in accordance with such principles of controlling banking risks which give opportunities for forecasting, evaluating and controlling these risks, and decreasing their influence on the activities of the banks.

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ

*Գ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳԴՀ դասախոս*

Ժամանակակից տնտեսական հարաբերությունների համատեքստում տնտեսական ակտիվության ապահովման կարևոր նախապայմանը հիմնավորված հարկային բեռի սահմանումն է: Անհրաժեշտ է հարկային բեռի այնպիսի մակարդակի սահմանում, որն առավելագունս կապահովի պետական բյուջեն համապատասխան հարկային եկամուտներով և միաժամանակ կնպաստի երկրում տնտեսական ակտիվության բարձրացմանը: Հայաստանի Հանրապետությունում

հարկային բեռի հաշվարկման ամենատարածված և հայտնի մեթոդը հարկային վճարումների բաժինն է ՀՆԱ-ի մեջ, որը բնորոշում է հարկային բեռը մակրոմակարդակում: Ցավոք, գոյություն չունի միկրոմակարդակում հարկային բեռի հաշվարկման կոնկրետ մեթոդ: Մասնագիտական գրականությունում հանդիպում են տնտեսավարող սուբյեկտների հարկային բեռի հաշվարկման տարբեր մեթոդներ, բայց տարբեր են այն բազային ցուցանիշները, որոնց վրա հարաբերվում է հարկերի գումարը: Հարկային բեռի հաշվարկման մեթոդն իր մեջ պետք է ներառի կազմակերպության ֆինանսական կայունության վրա հարկերի և վճարների ազդեցության քանակական և որակական գնահատականը:

Կազմակերպության հարկային բեռի գնահատումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են կազմակերպաիրավական ձևը, համապատասխան հարկային ռեժիմի կիրառման առանձնահատկությունները: Կազմակերպության համար հարկային բեռի վերլուծությունը հնարավորություն կտա ընդունելու կարևոր որոշումներ ինչպես կազմակերպաիրավական, այնպես էլ ոլորտի տեսանկյունից: Այս դեպքում հնարավորություն է ստեղծվում պլանավորել հեռանկարային զարգացումը պետության նկատմամբ պարտավորությունների պատշաճ կատարման համատեքստում:

Հայաստանի Հանրապետությունում հարկային բեռի հաշվարկման ամենատարածված մեթոդը հարկերի հարաբերակցությունն է ՀՆԱ-ին: Այս ցուցանիշն ամբողջապես չի բնութագրում հարկերի ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա, առավել ևս ցույց չի տալիս, թե տնտեսության յուրաքանչյուր ճյուղ ինչ հարկային բեռ է կրում: Ընդունված մեթոդով հաշվարկելու դեպքում հարկային բեռը Հայաստանի Հանրապետությունում կարելի է համարել «թեթև»: Սակայն այս ցուցանիշը ցածր համարել չի կարելի, քանի որ այն միջինացված ցուցանիշ է և չի տալիս ամբողջական պատկերացում հարկային բեռի մասին: Հարկային բեռի մասին ընդհանուր պատկերացում կարելի է կազմել ուղղակի և անուղղակի հարկերից ստացվող մուտքերի շարժընթացի վերլուծությունից (աղյուսակ 1): Հայաստանի Հանրապետությունում հարկային եկամուտների կառուցվածքում վերջին տարիներին նկատվում է անուղղակի հարկերի նվազման միտում:

Եթե 2001 թվականին անուղղակի հարկերը կազմում էին հարկային եկամուտների 71.4 %-ը, ապա 2002 թվականից սկսած ցուցանիշը ունեցել է նվազման միտում՝ 2011 թվականին կազմելով 58.3%: Ուղղակի հարկերի շարժընթացը ունեցել է աճի միտում:

Թեև 2003 թվականին, նախորդ տարիների հետ համեմատած, դիտվել է նվազման միտում՝ 20.5%-ից հասնելով 16.2%-ի, սակայն 2003 թվականից դիտվել է շարունակական աճ: 2004 թվականին ուղղակի հարկերը կազմել են հարկային եկամուտների 20.9%-ը, իսկ 2011 թվականին ցուցանիշը կազմել է 28.4%: 2011 թվականին 2010 թվական համեմատ անուղղակի հարկերը աճել են գրեթե 5.1 տոկոսային կետով և կազմում են ՀՆԱ-ի 9.5%-ը: Իսկ 2012 թվականի հունվար-մարտին 2011 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ անուղղակի հարկերը աճել են գրեթե 12.3 տոկոսային կետով¹:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թվականի հունվար-մարտին, էջ 123:

Աղյուսակ 1.

**Ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը
հարկային եկամուտների և ՀՆԱ-ի կազմում 1998-2011թթ.²**

	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Անուղղակի հարկեր (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ), (մլրդ. դրամ)	79.4	89.9	92.3	111	130	147	159	185	206	290	364	297	350	368
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում, (%)	3.6	0.3	4.2	1.4	0.3	9.2	3.4	0.9	7.2	9.9	0.8	9.0	1.0	8.3
Տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում, (%)	8.3	9.1	8.9	9.4	9.6	9.0	8.3	8.3	7.7	9.2	10.2	9.5	10.0	9.5
Ուղղակի հարկեր, (շահութահարկ, եկամտահարկ) (մլրդ. դրամ)	25.6	39	33.8	27.5	29.9	34.4	52.4	73.2	101	122	140	141	152	179
Տեսակարար կշիռը հարկային եկամուտների կազմում, (%)	20.5	26.2	23.5	17.8	16.1	16.2	20.9	24.1	28.0	25.3	23.4	28.0	26.4	28.4
Տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում, (%)	2.7	3.9	3.3	2.3	2.2	2.1	2.7	3.3	3.8	3.9	3.9	4.5	4.3	4.6

Ուղղակի հարկերի ցուցանիշը ՀՆԱ-ում դրսևորել է աճման միտում 2.0 տոկոսային կետով, և կազմում է 4.6 %: Ուղղակի հարկերի դերը գնալով բարձրանում է, սակայն անուղղակի հարկերը շարունակում են գերակայող հարկատեսակ համարվել:

Ըստ առանձին երկրների՝ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ներկայացված է աղյուսակ 2-ում:

Տնտեսության զարգացման ապահովման համատեքստում շատ կարևոր է բացահայտել տնտեսության առանձին ճյուղերի հարկային բեռի բաշխվածության աստիճանը և առանձնահատկությունները: Ցավոք, ՀՀ ազգային հաշիվների համակարգում մի շարք ցուցանիշների բացակայությունը հնարավորություն չի տալիս տարբեր մեթոդների կիրառմամբ հարկային բեռի հաշվարկի իրականացումը: Փոխարենը, փորձ է արվել հաշվարկել հարկային բեռը Մ. Կրեյնինյայի, Մ. Լիտվինի և ըստ ավելացված արժեքի մեթոդների՝ համադրելով առկա վիճակագրական ցուցանիշները:

Մ. Լիտվինի մեթոդի կիրառմամբ հարկային բեռի հաշվարկումն իրականաց-

² Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 1998-2010թթ., ԱՎԾ 2000-2011թթ. հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2000-2011թթ. հրապարակումներ:

վում է համարիչում հիմք ընդունելով «շահութահարկի գծով ծախս» ցուցանիշը:
Մ. Կրեյնինայի մեթոդի կիրառման դեպքում իրացումից հասույթը և իրացված արտադրանքի ծախսերի փոխարեն ընդունում ենք համախառն շահույթ ցուցանիշը:

Մեր կարծիքով ավելի նպատակահարմար է հարկային բեռը հաշվարկել ըստ ավելացված արժեքի: Այս դեպքում առաջարկում ենք հարկային բեռի գնահատումն իրականացնել հետևյալ ընթացակարգով.

1. Հաշվարկել կազմակերպության ավելացված արժեքը, որն հաշվարկում ենք որպես իրացումից հասույթի և նյութական ծախսերի տարբերություն,

2. Հաշվարկել ավելացված արժեքում հարկերի տեսակարար կշիռը (մեր օրինակում՝ շահութահարկի մեծությունը):

Աղյուսակ 2.

**Ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը
ՀՆԱ-ում ըստ առանձին երկրների, 2002-2008թթ. (տոկոսներով)³**

N	Երկիրը	2002		2003		2004		2005		2006		2007		2008	
		Անուղղակի հարկեր	Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր	Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր	Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր	Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր	Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր	Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր	Ուղղակի հարկեր
1	Ավստրիա	15.4	13.9	15.3	13.8	15.1	13.6	14.9	12.9	14.5	13.0	14.4	13.5	14.4	14.0
2	Բելգիա	13.2	17.5	13.3	17.1	13.4	17.4	13.5	17.5	13.7	17.2	13.3	17.0	13.1	17.2
3	Գերմանիա	12.1	10.7	12.2	10.6	12.0	10.2	12.1	10.3	12.4	10.9	12.9	11.3	12.8	11.5
4	Դանիա	17.5	29.3	17.4	29.6	17.6	30.4	18	31.9	18.1	30.7	18.0	30.1	17.4	30.0
5	Իռլանդիա	12.4	11.6	12.6	11.9	13.2	12.4	13.7	12.3	14.2	13.2	13.6	12.9	12.4	11.5
6	Իսպանիա	11.6	10.8	11.9	10.5	12.2	10.6	12.6	11.4	12.7	12.2	12.1	13.4	10.2	11.2
7	Իտալիա	14.7	14.1	14.3	14.7	14.3	13.9	14.4	13.4	15.1	14.4	15.0	15.1	14.0	15.4
8	Լատվիա	11.2	7.8	12.1	7.6	11.9	7.9	12.7	7.9	13.2	8.5	12.6	9.2	11.1	9.7
9	Լեհաստան	13.2	6.9	13.2	6.6	13.1	6.4	13.9	7.0	14.5	7.5	14.4	8.6	14.4	8.6
10	Լյուքսեմբուրգ	13.0	15.4	12.6	14.8	13.5	13.1	13.4	13.7	12.7	13.1	12.7	13.2	12.0	13.5
11	Ռումաստան	13.3	8.8	12.4	8.0	11.9	8.1	11.9	8.7	12.4	8.1	12.5	8.1	12.4	8.0
12	Ռոնգարիա	14.9	10.1	15.7	9.6	16.2	9.0	15.8	9.1	15.3	9.4	16.0	10.2	16.0	10.6
13	Մալթա	13.6	11.4	12.9	12.0	15.0	11.4	15.5	12.0	15.3	12.2	15.2	13.6	15.0	13.3
14	Սեծ Բրիտանիա	13.4	15.7	13.2	15.2	13.2	15.4	12.9	16.4	13.9	17.1	12.9	16.9	12.3	18.2
15	Կիբեռլանդներ	12.7	11.8	12.7	11.0	12.9	10.7	12.9	11.7	13.1	11.9	13.1	11.9	12.7	11.9
16	Շվեդիա	16.8	17.6	16.9	18.3	16.7	19.1	16.8	19.9	17.0	19.9	17.1	19.0	18.4	17.4
17	Չեխիա	10.8	9.1	11.1	9.6	11.8	9.6	11.8	9.2	11.3	9.2	11.5	9.5	11.3	8.6
18	Պորտուգալիա	14.5	9.4	15.1	8.7	14.4	8.6	15.3	8.5	15.7	8.8	15.3	9.8	14.9	9.9
19	Ֆրանսիա	15.4	11.8	15.3	11.4	15.5	11.6	15.6	11.8	15.5	12.2	15.3	11.9	15.0	11.8


Լիտվինի կողմից առաջարկվող մեթոդի էությունը հետևյալն է: Լիտվինը մանրամասն բնութագրում է հարկային բեռ հասկացությունը, որը ներառում է հետևյալ տարրերը. հարկերի և այլ պարտադիր վճարների քանակը, հարկերի կառուցվածքը, հարկերի գանձման մեխանիզմը և կազմակերպությունում հարկային բեռի մեծությունը: Նա հարկային բեռը հաշվարկում է հարկերի գումարը

³ Տե՛ս Europe in figures. Current and financial account, Eurostat yearbook 2010, p. 131; Taxation trends in the European Union. Data for the EU Member States, 2010, էջ 290-327:

հարաբերելով հարկի վճարման աղբյուրի գումարին:

Ավելացված արժեքն իրենից ներկայացնում է կազմակերպության համախառն եկամտի և ապրանքի արտադրության և իրացման գծով նյութական ծախսումների տարբերությունը:

Ստորև մեր կողմից փորձ է արվել հաշվարկել տնտեսության առանձին ճյուղերի հարկային բեռը տարբեր մեթոդների կիրառմամբ, ինչը հնարավորություն կտա համեմատել ստացված արդյունքները, գնահատել հարկային բեռի ներգործության աստիճանը, և կատարել ոլորտի զարգացմանը խոչընդոտող պատճառների վերլուծություն՝ բացահայտելով զարգացման հնարավոր ուղիների կիրառումն հարկման արդյունավետ բեռի սահմանման համատեքստում:




Գծապատկեր 1. Առևտրային կազմակերպությունների հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)⁴

Գծապատկեր 1-ում արտացոլված է առևտրային կազմակերպությունների հարկային բեռի փոփոխության շարժընթացը:

Հարկային բեռը, հաշվարկված տարբեր մեթոդներով, ունեցել է նույն փոփոխությունների շարժընթացը՝ որոշակի շեղումով: Ամենաբարձր հարկային բեռ գրանցվել է 2003-2004 թվականների կտրվածքով:


2009 թվականի հարկային բեռը, հաշվարկված ըստ ավելացված արժեքի, 2002 թվականի համեմատ աճել է գրեթե 3.2 տոկոսային կետով: Ըստ Մ. Լիտվինի մեթոդի՝ հաշվարկված հարկային բեռը 2009 թվականին կազմել է 8.1%, 2002 թվականի 10.1%-ի փոխարեն:

⁴ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱԿԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:



Գծապատկեր 2. Հանքագործական արդյունաբերության հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)⁵

Գծապատկեր 2-ում ներկայացված է դիտարկվող ժամանակահատվածում հանքագործական արդյունաբերության հարկային բեռը: Այս ոլորտում ևս հարկային բեռը ամենաբարձր մակադակի եղել է 2003 թվականին՝ միջինը 22.7%:




Գծապատկեր 3. Մշակող արդյունաբերության հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)⁶

⁵ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:

⁶ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:

2009 թվականին հարկային բեռն ըստ ավելացված արժեքի մեթոդի 2003 թվականից դրսևորել է նվազման միտում 3.2 տոկոսային կետով՝ կազմելով 6.2%: Մ. Կրեյնինայի մեթոդի դեպքում էլ նվազման ցուցանիշը կազմել է 0.58 տոկոսային կետ:


Հետաքրքիր շարժընթաց է գրանցվել մշակող արդյունաբերության ոլորտում: Հարկային բեռի աճ գրանցվել է ինչպես 2003-2004 թվականներին, այնպես էլ 2007-2008 թվականներին: Գծապատկեր 3-ից ակնհայտ է, որ այս ոլորտում հարկային բեռն իր բարձրակետին հասել է 2004, 2007 և 2008թթ.՝ կազմելով համապատասխանաբար՝ 10.6, 10.4 և 10.6% ըստ Մ. Լիտվինի մեթոդի: 2008 թվականի հարկային բեռի նման բարձր ցուցանիշի հիմնական պատճառը ֆինանսատնտեսական ճգնաժամն էր, որ էական ազդեցություն ունեցավ ոլորտի վրա:



Գծապատկեր 4. Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)⁷


Շատ ավելի պատկերավոր է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության ոլորտում հարկային բեռի տատանումների մակարդակը: Այս ոլորտում նկատելի է հարկային բեռի աճ, թեպետ մյուս ոլորտների հետ համեմատած՝ 2002 թվականին, հարկային բեռը եղել է ավելի բարձր: Այսինքն, համեմատական առումով դիտարկվող ժամանակահատվածում հարկային բեռը նվազել է: 2009 թվականին այն 2002 թվականի հետ համեմատած նվազել է 9.8 տոկոսային կետով (ըստ Մ. Լիտվինի մեթոդի)՝ կազմելով 9.1%, 2007 թվականի 8.6-ի և 2008 թվականի 6.1-ի փոխարեն:

⁷ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:



Գծապատկեր 5. Գյուղատնտեսության հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)⁸

Գյուղատնտեսության ոլորտի հարկային բեռը՝ հաշվարկված երեք մեթոդներով, արտացոլված է գծապատկեր 5-ում: Գյուղատնտեսության հարկային բեռը բարձրակետին եղել է 2004 թվականին՝ կազմելով 9.1%՝ ըստ Մ. Լիտվինի մեթոդի:




Գծապատկեր 6. Շինարարության հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)⁹

Հետագա տարիներին հարկային բեռի կտրուկ տատանումներ չեն նկատվում և 2009 թվականին հարկային բեռը կազմել է 0.3%՝ 2002 թվականի 5.8% փոխարեն: Ըստ ավելացված արժեքի մեթոդի՝ 2009 թվականին հարկային բեռը 2002 թվականի համեմատ նվազել է 2.9 տոկոսային կետով՝ կազմելով 0.3%:

⁸ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:


⁹ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:



Գծապատկեր 7. Առևտրի հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)¹⁰

Տնտեսության շինարարության ոլորտում նկատելի է հարկային բեռի աճ, ընդ որում ընդհանուր հարկային բեռն՝ ըստ ավելացված արժեքի, կազմում է 13.3%, որը 2002 թվականի համեմատ աճել է 10.0 %-ով: Ըստ Մ. Լիտվինի մեթոդի հաշվարկված հարկային բեռը 2002, 2004, 2008թթ. համապատասխանաբար եղել են 15.5, 12.0 և 14.0%: 2008 թվականի համեմատ 2009 թվականին նվազել է 2.6 տոկոսային կետով՝ կազմելով 11.4%:

Տնտեսության հաջորդ ճյուղը առևտրի ոլորտն է, որտեղ հարկային բեռը դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է անկայուն տատանումներ՝ և՛ աճի, և՛ նվազման միտումներ (տես՝ գծապատկեր 7):



Գծապատկեր 8. Տրանսպորտի և կապի հարկային բեռը 2002-2009թթ. (տոկոսներով)¹¹

¹⁰ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:

¹¹ Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ 2000-2011թթ. տվյալների հիման վրա:

Առևտրի ոլորտի ընդհանուր հարկային բեռը՝ ըստ ավելացված արժեքի մեթոդի, դրսևորել է աճի միտում: 2009 թվականին հարկային բեռը՝ ըստ Մ. Լիտվինի մեթոդի, կազմել է 8.0%՝ 2002 թվականի 9.2%-ի փոխարեն:

Ուշագրավ է տրանսպորտի և կապի ոլորտում հարկային բեռի տատանումների շարժընթացը (գծապատկեր 8): Տրանսպորտի և կապի ոլորտում հարկային բեռի աճի և նվազման միտումները ունեցել են համաչափ բնույթ: 2004, 2006 և 2008 թվականներին հարկային բեռն աճել է:

Սակայն 2008 թվականից աճման միտումը շարունակական բնույթ է կրել: Տնտեսության ոլորտներից տրանսպորտն ու կապն է, որ ունեցել է աճման այդպիսի կայուն տեմպ. 2009 թվականին 2002 թվականի համեմատ աճել է 2.0 տոկոսային կետով՝ ըստ Մ. Լիտվինի մեթոդի կազմելով 12.9%:

Ըստ էության հարկային բեռի գնահատման բազմաթիվ մեթոդներից ավելի նպատակահարմար է կիրառել ավելացված արժեքի ցուցանիշի հիման վրա հարկային բեռի գնահատման մեթոդը:

Կարող ենք արձանագրել, որ թեև հարկային բեռի նվազմանն ուղղված միջոցառումներին, այնուամենայնիվ տնտեսության առանձին ճյուղերի հարկային բեռի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2002 թվականի հետ համեմատած առկա է հարկային բեռի աճ ԶՀ տնտեսության մի շարք ոլորտներում: Հարկային բեռի ցուցանիշը բարձր է հատկապես հանքագործական արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և կապի ոլորտներում:

Այսպիսով, ԶՀ հարկերի համակարգում կատարվող ցանկացած փոփոխություն կամ լրացում՝ դրույքաչափի բարձրացում կամ նվազեցում, արտոնությունների տրամադրում կամ սահմանափակում, նոր հարկատեսակների կիրառում, ունենում է ուղղակի ազդեցություն կազմակերպությունների գործունեության վրա: Հետևաբար, հարկման սահմանները որոշելիս առաջնահերթ խնդիր է դառնում կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա հարկային բեռի ներգործության գնահատումը:

Հարկային բեռի արդունավետության բարձրացման տեսլականը պետք է հիմնված լինի ոչ միայն կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ներգործության գնահատման, այլև՝ հարկման հիմնարար սկզբունքների և տնտեսության իրական հատվածում դրական փոփոխությունների վրա: Ուսումնասիրելով ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ առանձին ճյուղերի հարկային բեռը՝ հանգում ենք այն պարզ իրողության, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հարկային բեռը թեթևացնելու՝ ապահովելով բաշխման համաչափություն տնտեսության բոլոր ճյուղերում: Այսպիսով, ակնհայտ է, որ չնայած իրականացվող բարեփոխումներին, Հայաստանում հարկային բեռը շարունակում է աճել, ընդ որում՝ ըստ տնտեսության ճյուղերի դրսևորելով անհամաչափ ազդեցություն:

Հարկ է նշել, որ գործարարության արդյունավետությունը բացահայտող ոլորտներից ամենաթույլ ոլորտը շարունակում է մնալ հարկային համակարգը: Այդ մասին են վկայում նաև Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Doing Business» ամենամյա զեկույցները, որոնց համաձայն Հայաստանը ընդամենը 6 կետով է բարելավել իր ցուցանիշը հարկման ոլորտում՝ աշխարհի 183 երկրների շարքում զբաղեցնելով 153 հորիզոնականը (աղյուսակ 3):

Վերը նշվածի համատեքստում չափազանց կարևոր են հարկային մշակույթի ձևավորումը, հասարակության իրազեկության բարձրացումը, վստահության մթնոլորտի ձևավորումը, հարկային օրենսդրության կատարելագործման ուղղությունների քննարկումը, հարկային բեռի սահմանման ժամանակակից պետական քաղաքականության մշակումը, նպատակների և միջոցառումների հստակեցումը, որոնք կնպաստեն պետական բյուջե հարկային եկամուտների աճին՝ տնտեսության զարգացման և տնտեսական ակտիվության ապահովման համատեքստում:

Աղյուսակ 3.

Հարկման ոլորտը բնութագրող գործոնները Հայաստանի Հանրապետությունում¹²

	DB2006	DB2007	DB2008	DB2009	DB2010	DB2011	DB2012	ՏՀԶԿ երկրների միջին ցուցանիշ
Վճարումներ (քանակ) ¹³	50	50	50	50	50	50	34	13
Ժամանակ(ժամ) ¹⁴	580	580	581	581	581	581	500	186
Պրոյք(տոկոս) ¹⁵	38.7	38.7	40.7	40.7	40.7	40.7	40.9	42.7

Տնտեսական զարգացումների համատեքստում կարևորվում է հիմնավորված հարկային բեռի սահմանումը: Հետևաբար, ավելի նպատակահարմար է հարկային բեռը գնահատել ըստ տնտեսության առանձին ոլորտների, այսինքն ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ բացահայտելու համար հարկային բեռի ներգործության աստիճանը կոնկրետ տվյալ ճյուղի զարգացումների մակարդակով:

Բնականաբար իրականացվող բարեփոխումները միտված են կանոնակարգելու հարկման դաշտը, կանխելու հարկային իրավախախտումները: Սակայն այդ ամենը պետք է լինի ընկալելի հարկ վճարողի համար և պետք է գնահատվեն դրա հետևանքները տնտեսության մակարդակով: Ի վերջո, յուրաքանչյուր պետության տնտեսական զարգացման հիմքը կազմակերպություններն են, իսկ նրանց ֆինանսական կայունության հետ կապված խնդիրները իրենց արտացոլում են ստանում տնտեսական զարգացումների մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Հարությունյան Վ. Լ., Հարությունյան Դ. Վ., Հարությունյան Տ. Վ.** Հարկեր և հարկազանձում, Երևան: Գիտություն, 2010, 599 էջ:

2. **Սովարյան Յու.** ՀՀ տնտեսության պետական կառավարման արդյունավետությունը,

¹² Տե՛ս The World Bank. Doing Business in a more transparent world, Economic Profile: Armenia, 2012, էջ 70-74:

¹³ Հարկային վճարումների քանակն է տարվա ընթացքում:

¹⁴ Հարկերի հաշվարկման և վճարման վրա ծախսվող ժամանակն է տարվա ընթացքում:

¹⁵ Վճարված բոլոր հարկերի տեսակարար կշիռն է շահույթի նկատմամբ:

միտումները և ածի գերազայությունները // Էկոնոմիկա, N 5, 2000, էջ 26-35:

3. **Крейнина М. Н.** Финансовое состояние предприятия. Методы оценки, М, ИКЦ, «ДИС», 1997.
4. **Литвин М. И.** Налоговая нагрузка и экономические интересы предприятий // Финансы. 1998, N5, с. 29-31.
5. Налоги и налоговое право. Учебное пособие, Под ред. **А. В. Брызгалина**, М., Аналитика - Пресс, 1998.
6. Налоги и налогообложение. Учебник, **Д. Г. Черник** и **др.**, М., ИНФРА -М, 2001.
7. **Юткина Т. Ф.** Налоги и налогообложение: учебник, М., ИНФРА-М, 1999.

ПРОЯВЛЕНИЕ ОСОБЕННОСТЕЙ НАЛОГОВОГО БРЕМЕНИ ПО ОТДЕЛЬНЫМ ОТРАСЛЯМ ЭКОНОМИКИ В РА

Г. А. Хачатрян

Статья посвящена проявлению особенностей налогового бремени по отдельным отраслям экономики РА.

В контексте современных экономических отношений для обеспечения экономической активности важной предпосылкой является определение эффективного налогового бремени. Оценка налогового бремени предприятий зависит от ряда факторов, в том числе от организационно-правовых форм и особенностями соответствующих налоговых режимов. В контексте обеспечения экономического развития весьма важно определить степень распределения и особенности налогового бремени по отдельным отраслям экономики.

Следовательно, определение эффективного налогового бремени должно быть совместимо с определением финансовой стабильности, обеспечивая их дальнейшее развитие и прогресс.

THE PECULIARITIES OF TAX BURDEN MANIFESTATION IN THE RA ACCORDING TO SEPARATE BRANCHES OF THE ECONOMY

G. A. Khachatryan

In the modern economic relationships' context the main premise to provide economic activity is the definition of the efficient tax burden. The estimation of a certain organization's tax burden depends on some factors which include organizing-legal way, the peculiarities of corresponding tax regime application. In the context of providing economic development it is very important to reveal the distribution degree and peculiarities of the tax burden of separate branches of the economy. Thus the efficient tax burden's definition should be compatible in organizations' financial stability context providing their further development and progress.